

րեն. Շահաբաս կհրամայէ կանգնեցնել, և ամեն մի զօրականին իւր ձիոյ տուգրակով հող բերել լցնել նորա գլխին. որով կձեանայ այս փոքրիկ բլրակը ^{«Ա»} անտի—
Մազրայ,»:

Խաչկաշէն.

Իլանտաղոյ հիւսիսային արևելեան ստորոտի վերայ ձգուած է այս զիւղ, երբեմն շայաբնակ. այս զիւղն ևս ընդունեց ունիթոռաց քարոլուծիւնն. այժմու բնակիչք զեղջ՝ քառասուն տան չափ մահմետականք են, բայց չէ յայտ թէ հին շայերն են լատինացած, թէ յետոյ այլ և այլ տէրերէ ժողովուածներ. եկեղեցի զեղջըս, որը հնութեան երեսէն, և որը մահմետական մոլեռանդուութեամբ այժմ միանգամայն գետնի հետ հաւասարուած ու եղած է գեղացոյ մէկի պարտեղատեղ հիմունքն միայն միան նշմարելիք. այս գեղես մէջ կրդիէ աղբիւր մի բարեհամ ի բաւականութիւն բնակչացն:

(Շարունակել)

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԵԿԵՅ.

(Շարունակել)

Գ. Երեւէ Անոյ:

Որպէս և սա բաժանի յԱրևելեան Շիրակայ Ախուրեան գետով, նոյնպէս և յԱրազգաւորաց Աարուց գետովն ի հիւսսոյ. յարևմտից ի զիւղօրայիցն Աարուց. և ի հարաւոյ յարևմտեան Շիրակայ ձորովն Մազաբերդու 1):

(1) Այս բերդի յիշատակութեան առ պատմութանս սովին անուամբ ոչ պատահեցայ, որ աստ աս ամենեւին նովին անուամբ զեռ կոչի:

Աւ սա երկիր հացաւէտ, ընդարձակ դաշտորայս ունի, և յարևմտակողմն ի թիկունս Անոյ՝ տարածանին ընդարձակ լերինք խտաւէտ և պարարտարօտ, և ձորս ձորս ի ձմերոց խաշանց, և քարանձաւայրս ի պահպանութիւն նոցա. բայց և երբեմն հիւս ձեան իջանէ, որպէս և յաւուրս մեր 1846 զիպաւ, որ առ դրամբ այրին զեղեալ եկաց, և փակեալ յանշնչութեան զխաշինս խեղդեաց:

Անի քաղաք իբրև երկոտասան ժամուհետ ի կայ ի Աարուց գրեհս ի միջակի անդ չորից մասանցն զետեղեալ. երկիր հացի, մսոյ և ձկանց: Մրգեղէնք իւր ի Բագարանէ, ի Աղզուանէ, յԱրարատեան դաշտէ գան բաղում առատութեամբ, թող զչորացեալ մրգեղէնս որ զայ յԱտրպատկանէ, յորոց զոմանս ածեն անդր ի Բարխունէ:

Աղահանք իւր որ ի Աղզուան և ի Աողբ՝ մօտաւոր գոլով՝ մի է ի վաճառաց նորա, և տարածանի մինչև ի խորս Արատանի 2):

Այս քաղաք ի հանդիպոյ՝ յաջմէ Ախուրեան գետոյ ունի զքարակաւուրս հետ զհետէ բարձրացեալս, և ինքն կայ ի ձախմէ ի վեր ի վեր նոյնպէս բարձրացեալ արևահայեցիկ, զիտող ի գետ անդր:


Ի հիւսսակողմն 3) կրկին պարխապք նորա մեծաւ մասամբ անկործան. զորս

(2) Առ զիւղականս որք կարօտին անասնոց բաղում պէտն, ոչ սակաւուք աղովք շատանան զի և նոցա պարտին տալ ուտել յամարան:

(3) Մէք զոր հիւսսակողմն եղաք, շ. ներսէս վարդապետ յարևակողմն գնէ ի Բաղմալափին, որում չմ բաւական հակառակել, բայց ինձ այսպէս թուեցաւ, իցէ թէ ի հիւսիս արևելից իցէ կամ յարևելս հիւսսի:

կարծեմ թէ ի գետեզերացն առեալ ի վեր, և երկայնեալ, և ընդ դուռնն անցեալ բոլորէ զանկիւն յարեմուտս շրջելով, աւարտէ ի վերայ Օսղկոցաց ձորոյն, զի

անտի անդր և չիք իսկ պէտք պարսսի, բնական զիրք ապառաժին անմատոյց պարիսպ է առ խորին ձորովն:



Պարսիսայ և Գլխաւոր դուռն (Էն-ս) .

Ըստ կողմեր մեծի պարսպին արտաքոյ է տափարակ զաշտաժար յերիս ժամու ծանապարհ անդր քան զԽոշափանս և զՎաղար երկայնեալ զէպ ի վեր ի գեան, և տարածեալ յարեմուտս ի վեր քան զՂալա:

Յարեմուտակողմն ի ձորն Օսղկոցաց իջեալ ի ներքոյ քաղաքին և թագաւորական ապարանին է ապառաժն, յորոյ ի միջին ակղւոջ են բազում ծակախր, ոմանք լուռն, ոմանք նոցա պատուհանք, ընդ իս սանդղովք պարտի դք ելանել, և սո լրակելով մտանել, զուցէ, ձորն այսչափ

ցածագոյն չէր, ձմերոց խաշանց զործեալ ի, են զայդոսիկ:

Ի ձորոյ աստի դէպ յարեմուտս երկայնաձգի ձորն Օսղկոցաց, և սկզբնաւորին յերկուց կուսէ ստորտոք լերանց, ըստ ձորոյն և սոքա ծաղկազդեալք, խոտաւէտ, և պարարտարօտ, որք ի վեր անդր հետ զհեռէ բարձրանան լայնանան, և յառաջ գնացեալ բաժանեն զարեմուտն Շիրակ, և զոր ի նոյն կողմն զօհմանս իսկ Ապղուանու, ի սահմանաց Շիրակայ Ենոյ և Արարոց, և այնպէս աղխաղխեալ երթան հանդիպին Սօղանու լերին:


Իսկ ջուրն Օսաղիոցաց իջեալ ընդ ծակոտիկն ապառաժն ընդհարեալ, խտորի ի հարաւ, և պատեալ զայնու կողմամբ քաղաքին մտանէ յԱխուրեան: Ի՞մ կարծիք են, թէ գուցէ ի նախնուձն զայս ջուր ի վերուստ անառուստ խտորեցուցեալ բերեալ մուծեալ իցին ի դրան կողմանէ ի քաղաքն. զի այնչափ բազմամարդ քաղաք առանց ջրոյ, և ածելոյ ի վեր, զհարդ կարելին բաւականանալ:

Ի Օսաղիոց - ձորոյ անախ ընդ ցածագոյն սպառաժուտ ճանապարհ յառաջ խաղա-

ցեալ հասանէ ի Մաղղբերդ, յորմէ անդր կայ արեւմտեան Շիրակ:

Շրջապատ քաղաքիս թուի ինձ լինել չորից ժամուց ճանապարհ, բոլորեալ առ գեան զերբն և առ ձորոյն և առ պարսպան:

Ախուրեան գետ և զառաջեաւ քաղաքիս խտորուձն ինչ ցուցանէ, և կազմէ զկրզզին քարածայռ բերդաւոր, ցածագոյն յոյժ քան զքաղաքն:



Պարխապ Բնոյ յարեւմտից կողմէ.

Պամուրջ սորա երբ արդեօք քանդեալ իցէ, չբաւեցաք զխաւ իզրոց և կամ յաւանդութեանց:

Ի միջ քաղաքին է բարձրագոյն տեղի ինչ հայեցիկ յամենայն կողմն, ուր հին և

առաջին բերդն լեալ է, շինեալ կամ նոյ գեալ, կամ ընդարձակեալ յԱշոտոյ Մակերէ Բագրատունոյ: Չի սա յառաջագոյն լեալ է աւան փոքր, յորժամ Շիրակ էր ի ձեռս Աստարականաց, յորոց

բազում գանձուք զնոյ զնեաց Աշոտ Մասիկեր 783, և կանգնեաց զբերդն. և յառաջ քան զգահանխատ լինեն՝ յիշատակի ի Յովհաննէ Աթուղիկոսէ Անի բերդ:

Ի նախշուն եկեղեցոյ՝ յորոց որմունս գորով պատկերք նկարեալք՝ առեալ է զայդ անուանակոչութիւն. գոյ գեանուղի ճանապարհ, ընդ որ իջեալ, և անթաց ի ներքուստ Ախուրեան գետոյ անցեալ յայնիոյս ի հանդիպակացն ելանէ ի դուրս:

Հայեցեալ ցբարձրութիւն ելից և մտից նորա, և ընդ ոչ բազմօք բացակայութիւն, և ցխորութիւն գետոյն, պարտ է ասել թէ ել և էջք սորա են աշտիճանաւորք:

Այժմ ելից ճանապարհնորա որ ի հանդիպոյ փակեցին Աուսք, առ արգելուլ զգորոց և զփախտեկից երթեկեկութիւն:

Օայսպիսի գեանուղի ճանապարհ լուեալ էի լինել և ի բերդն Անի, որ ի Վարանաղիս, ի ներքուստ Ափրատայ անցեալ ելանէ ի հանդիպոյ: Օոր ոմանք կարծեն ջրոյ ճանապարհ լինել. բայց հայեցեալ յաշխատութիւնսն և ի վտանգս՝ արժան է ասել, թէ վասն ջրոյ, և եթէ քաջ և սղիւ բութեամբ յԱփրատայ ածել ջուր ի բերդն բաւէր: Ապա պարտ է զիտել, թէ վասն պաշարման ժամանակի լեալ է, պաշար ածել, զորս առնուլ ի ներքս, և կամ ի պահու անակնկալ՝ անտի ելեալ յարձակել ի վերայ պաշարողաց:

Օխարդ և իցէ, է գործ մեծի և տաժանակիր աշխատութեան՝ զմահուչափ վտանգս յանձնառելոց: Աւ զարմանս իմն բերէ, զի այն գետ որ ի վերուստ վայրահակ ծանրութեամբն ընթանալ ընթանայ, և հորվեալ զլորէ զքարինս մեծամեծս իսկ,

եթէ յանկարծակի պատահեցէ, և կամ ընդ ձեղքուածսն հասանիցէ, զինչ կոծիկ և նիւթ ի պատրաստի ունէին, քաջ և իսկոյն խց սնել զայն, և անընդհատ յառաջ տանել զսկսուածն:

Ինձ թուի թէ այս բերդ որ զանունս առ Անի կոչման, զի որպէս նա, և սա կալաւ զնոյն գեանուղի շաւիղ, և յառաջ քան զԱշոտ Մասիկեր ոչ պատահեցայ կոչել աւանիս Անի: Ապա նա ինքն որ ի կողմանց Սպերու գաղթեցաւ աստ յետ շինելոյ զբերդս. նա և զայս պիտանի բերդին կարծեալ՝ շինեաց զշաւիղս համեմատ առաջնոյ Անուոյն, անտի կոչեցաւ երկրորդ Անի և սա:

Աւտ օծաւ թաղաւոր Աշոտ Գ. Ողորմած կոչեցեալն 961, և շինեաց զներքին պարիսպն, յորմէ և սկիզբն էառ լինել զահանխատ թագաւորացն Բաղրատունեաց:


Ապա որդի նորին Սմբատ թագաւորեալ, զարտաքին պարիսպն շինեաց, դուռն նորա մեծակառոյց և բարձրադիր, ընդ որ մտեալ առ դուռն միջնապարսպին: Աւ ընդ մէջ կրկին պարսպացս սննեակք և վերնայարկք և սանդուղք ելից ի նոսա. հիմնեալ արձանացեալ բարձրաբեձ բրբզունք ահեղ և զարմանալի: «Սա լեալիք «արկեալն պարսպափակ առնէ զպարիսպն «Անուոյ յԱխուրեան գետոյ մինչ ցձորն

(4) Այս բառ յաճախ ի գործածութեան է ի Հայաստան, և նշանակէ լեզբին. թըն. մինչև բայ իսկ կազմեն, կոճկեմ, կոճկեցի: Ախորժ էր ինձ զհայեցի անուանս խոտոց, զոր անդ անուանէին հաւաքել. բայց տեսի զնոսա անգիտակ. և զոր յայսկոյս հաւաքեցի ի գաւառագրութեանս Գեղարբունոյ եղեալ եմ:

«Ճագրոցաց, կրով և վիճօք մածուցեալ
 «մահարձանօք բրգացն բարձրաբերձ պա-
 «րուպեալ բացազոյն քան զՀին պարխսպ-
 «քըն յընդարձակութիւն քաղաքին: Աւ-
 «մայրազերան զբամբք և երկաթագամ
 «հաստահեղոյս բեւեալինա ամրացու-
 «ցեալ: Արկանէ և հիմն մեծաշէն եկե-
 «ղեցւոյն Աթուղիկէ, որ այժմս ասի
 «Արրորդութիւն՝ ի նոյն քաղաքին Ա-
 «նուոյ՝ ի ձեռն ճարտարապետին Տրգա-
 «տայ, որ զԱթուղիկոսարանին եկեղե-
 «ցին շինեաց, այն է յԱրգինայ:

Չայս Արրորդութեան Ակեղեցի յետոյ
 եղայր իւր Վագիկ թագաւոր բովանդա-

կեալ լրացոյց, շինեալ զայն ամենապա-
 ծառ վայելչութեամբ, բարձրաբերձ կամա-
 րօք զմբկթաւորեալ, և աւարեալ 993,
 և զարդարեաց զայն ծիրանածաղիկ զար-
 դու, և ոսկեղէն և արծաթեղէն անօ-
 թովք. և յայնմ հետէ յԱնի փոխազրե-
 ցաւ աթոռ Աթողիկոսութեան: Ի շի-
 նութեանս այսմիկ գործակից էր Ասորա-
 միտէ բարեպաշտ թագուհին Վագիկայ, որ
 էր գուտար Վասակայ Արսականի իշխա-
 նին Արենեաց. որ յետ մանգարարութեան
 իւրոյ զերկու թագաժառանգ որդիս, իս-
 պառ տուեալ էր զանձն ի գործ հոգևորա-
 կան վարուց:



Յարակազիշ Թայր Ակեղեցւոյն Անուոյ.

Չ զարմանաչէն եկեղեցւոյս, սակաւուք տուեալ եմ յառաջն ծանօթս, զոր և ի շայաստանեայց լրագրի հրատարակեալ տեսի: Առաւել ևս էր գովեստն, զոր ընծայէր Հ. Կերտէս վարդապետ ի Բաղմավէպն, ուստի ոչ այլ ինչ կամիմ յաւելլուլ աստ. այլ զն ի վերայ կրկին պահարանացն են և վերնապահարանք, որոց զրունք ի վերայ դրանց պահարանին անկանին. և այժմ բաց է. ընդ որ միայն բաղմաշախճան սանդղովք ելանել հրնար է:

Արտաքոյ զհարաւային և զարեւմտեան կողմամբ դեռ կան սրահք սալայատակք:

Մ զկիթն որ ի քաղաքիս, համակ ի միոյ կարմրագոյն քարահանքէ, ի դահաւէժ իմն տեղուցէ զհիմն առեալ բարձրանայ. և յերս անդ առ իւրաքանչիւր կարգ դասաւորութեան քարանց քաղելով իմն ի ներքս ներքս եկաւորի, մինչև ցհաւասարութիւն գեանոյն, ուր արկանէ զկամար, և տարեալ կցէ ընդ հիմունս առաջին սեանցըն. ընդ կամարաւն խորին նկուղ թողու, զորոյ մի կամարն քանդեալ են գուցէ կարծեալ ի նմա լինել պահենեաց ինչ:

Ի ձև չորեքկուսի է չորիւք սեամբք, են և որմասիւնք նորա. ոչ այնչափ բարձրագոյն կամարակապ. կից նմին է և բուրգն ի նոյն քարահանքէ:

Արդարև սա ի ձև ժամատան իմն է, բայց կամ տաճար առ նովաւ, կամ տեղի խորանի ոչ դիտեցի. և զի բուրգն իսկ է ի նոյն քարահանքէ, և ևս չեն քարինք սորա որպէս զեկեղեցեացն որձաքար: Ապա երևի թէ և արհեստաչէն, յետոյ մզկիթ կանգնեալ, և ոչ յեկեղեցւոյ շրջեալ, զոր թերևս ստուգեցն արձանագրութիւնք

յարտաքին որմն նորա Պարսկերէն, Վլրացերէն և շայերէն:

Ի պատմութիւնս պատահիմք յիշատակութեան այլ և այլ եկեղեցեաց շինութեան, բայց որպէս մեք ոչ ըստ արժանոյն շրջեցաք՝ յաղիխարշ խորովանաց սրտի, նոյնպէս և ոչ լիուլի ստորագրութեան նորա դիպայցայս վայր, որպէս և այս իսկ մեծաւ մտամբ թերի և ոչ զերծ ի սխալանաց գուցէ:

Արանի թէ մի ոք ի հայրենասէր բանադիտաց՝ զամենայն զգրեալքս զորս ի մէնջ, և զորս և յայլոց ազգաց գրեցին, ի ձեռն ունելով, եւթնեակ մի շրջադայէր, մինչև բաւական լինել զթերին լցուցանել, և զսխալանն ուղղադրեալ տայր ի լոյս, հաւաքեալ և զարձանագրութիւնն:

Արդ թիւ շինութեան և բարեզարդ պայծառութեան քաղաքիս Անոյ՝ տեսաք լինել յամի Տեառն 979, ի ծաղկախիտ պարտիզի դաշտին Շիրակայ քաղաք պանծալի, և պարծանք քաղաքաց վայելացաւ: Այսաւ շինութեամբ և բնակութեամբ, հարստացաւ, նախանձելի ցուցաւ:

Ո՛հ, զի՞նչ ասացից, ի ներքուստ փուշք և դժնիկք անմիաբանութեան և ատելութեան հեղձուցիկ արարին զնա, և հըրդեհեալ կիզն զբարեվայելութիւն: Թող զորս յարտաքնոց անտի ազարձակ էին, երբեմն ի մէնջ, և երբեմն օտարք յօտարաց խլել և յափշտակել:

Վաճառեցաւ սա ի Յոյնս, զոր Աստիվարդ պատմաբան մեղմով իմն ընծայէ Պետրոսի Վետադարձի, թէպէտ այն եղև կամօք Յովհաննու թագաւորի:

Արկին դառն և անիրաւ վաճառումն եղև յերկրուէն ապիրատէ: Հուսկ ուրեմն

ի զործ եղաւ չարանենդ դրժողութեամբ վեատ Սարգսի:


Մին Յոյնք, ցրուեցին զբաջս ի Հայոց. չբաւեցին պահպանել մինչև Պարսիկք աւերածով և կոտորածիւ առին ի ձեռաց նոցա: Լյանց ի Ալիքս, ի Թաթարս, տարուբերէր ի մին և ի միւսն:

Յամին 1319 եղև վերջին կործանումն սորա ի շարժոյից երկրի. և որ մինչև ցայն վայր հայրենասիրագոյնքն ի Հայոց բաւեցին զօրել և կալ, սկսան թողուլ իսպառ և տարադէպ գնացեալ ցրուեցան յերկիր

հեռաւոր: Եւ մնաց այս քաղաք ամայի և թափուր ի բնակչաց. և հեազհետէ բանին և հնութեանցն մնացորդ:

Մէք ցայս վայր. ուր իցեն եղերերգութն Պողթանայ. թող յարիցեն ողբերգու լինել ի լաց և յաշխար զաւերածովք մեծի քաղաքիս:

Օ ի իմ որպէս ի շջել անդ իմում ոչ բաւեցի ճնշել զարասք աչաց, և տանել բեկման ոգւոյ, սապէս և ի բանիս ընդերկարել տկարացեալ, անցանեմ յոր դէմն եղեալ եմ: (Շարունակ):



Ներքին երևոյթ հայր Լիկեղեցւոյն Անույ.